Հուսիկ Արա

Քեզ ունեմ իրականում

Քո այս ծիրանավոր տեսքով, երկիր,
ազատ ու ինքնիշխան,
երազանք ես եղել՝
ծաղկած թերթին մագաղաթի,
ձեռագրված մատյաններում ու գրքերի էջերին,
անգամ լրագրերում նոր ժամանակների:

Մեր աչքերը երկար են սպասել քեզ,
որպես սեր՝ հսկել են տափաստանում
ու բարձր լեռների վրա,
և սերնդեսերունդ փոխանցվել՝
քեզ այս վեհությամբ՝ վսեմ ու ինքնուրույն,
տեսնելու համար.
ու մեր երազը այնքան էր մեծ,
որ դիտարանում բարձր աշտարակի չհոգնեց
ամեն վայրկյան քո մոտենալը զգալ:

Ու հիմա, սիրած կնոջ նման,
սրտիս հետ ես խաղում չարաճճի ու վստահ:
Քեզ ունեմ իրականում,
և այնքան ես շոշափելի,
որ հաճույքիդ հետ հասցրել եմ
ցավիդ դառնությունն էլ զգալ,

մինչդեռ երազ էիր հեռու
սերը փնտրելու գնացող ասպետների համար:

Իմ մի բաժակ ջուրն ես, որ խմում եմ,
քեզ ուտում եմ որպես հաց.
իմ շնչելու առավոտն ես:
Թե ուղիղ խոսք ես ասում, քո բառի մեջ եմ,
երբ խաբում ես, ինքս ինձ հետ եմ նորից:

Դու այն տարածքն ես,
որտեղ սիրում են, ապրում… ու չեն մեռնում.
ձուլվում են երազին,
որ իրական է որպես հայրենիք՝
ազատ ու ինքնիշխան: